վորութեան ժամանակին, կացոյց 'ի տեղի իւր զԱբրահամ Եպիսկոպոս որդի Իսկէնտէրի որդւոյ Ապտուլլահի Բերիացւոյ, այր խոհեմ և մտացի հմուտ ամենայն գործոց կառավարութեան, զոր ինքն ընտրեալ էր յառաջագոյն, և ետ հաստատել զիշխանութիւն նորին մուրհակաւ դատաւորին եւ մեծամեծացն այլազգեաց. և դարձ արարեալ 'ի վանս՝ նստոյց զԱբրահամ յաթոռ Պատրիարքութեան, յանձն արարեալ նմա զամենայն հոգս և զյանձանցանս աթոռոյն, և ինքն առանձնացաւ 'ի սենեկի ուրեք մինչ 'ի վախճան կենաց իւրոց. 'ի թուին՝ ՌՂԱ (1485)։ Սոյն այս Աբրահամ գնեաց տուն մի 'ի կալուած Ս. Յակոբայ (1492)։

Յոյն Արաբացի պատմիչն յառաջ բերէ զճանապարհորդութիւն Գաղղիացի կրօնաւորի ումեմն Նիգոլայ Կուիոն անուն, ուր ասէ՝ եհաս նա յԵրուսաղէմ եւ իջեւանեցաւ 'ի վանս Սիոնի ճոխացեալ հարստութեամբ ընծայիւք թագաւորացն Եւրոպացւոց. և վանքն էր 'ի տեղւոջ յայնմիկ, ուր Քրիստոս կատարեաց զխորհուրդ Ընթրեաց և 24 կրօնաւորք Լատինաց բնակէին անդ, տեսուչ նոցին կոչէր պահապան Ս. Երկրին. 2 քահանայք նոցին բնակէին 'ի տաճարն Ս. Յարութեան. եւ թէ Լատինք երկնչէին 'ի բազմութենէ Յունաց, զի Գերեզմանն Քրիստոսի էր 'ի ձեռս նոցա, և մեծ եկեղեցին Բեթղեհէմի՝ էր 'ի ձեռս Լատինաց, և կոչէին զնա յանուն Ս. Աստուածածնի, տիրէին նաեւ այլոյ Ծննդեան, ունէին և զայլ վանս 'ի Սիոն, ուր բնակէին 6 հաւատաւոր կանայք։ Հայք ունէին զՍ. Յակոբ և զՍ. Փրկիչ։ Եւ էին յԵրուսաղէմ Մարոնիտք, Ասորիք, որք Յակոբիք կոչին, Քիլտանիք, որք են Նեստորականք, և Գոլտիք. սոքա ամենեքեան բազմութեամբ բնակէին յԵրուսաղէմ, եւ Հրէայք էին անձինք իբրեւ 300։ բայց Վրացիք 'ի սմին ժամանակի էին 'ի մեծի յարգանս ընդ իշխանութեամբ Սուլթանացն Եգիպտոսի. և պատճառ այսմ, զի ծագումն Սուլթանաց էր յաշխարհէն արեւելից, և Վիրք գերի վարէին զլեռնարնակ Զէրքէզս, և Սուլթանք յիշէին զաղգատոհմն իւրեանց. գիտէին նաեւ զզօրութիւնս Վրաց, եւ պատուէին զսխատաւորս նոցա, որք մտանէին յԵրուսաղէմ երիվարօք և զինուք, և ոչ տային հարկս ե-